Ռաֆֆի

Վասակ

Միհրներսեհը... խոստացավ նորան տալ ավելի մեծ իշխանություն. քան ինչքան ուներ ինքը...: Նա ասում էր՝ իբր թե Վասակը կարող է հասնել մինչև թագավորական աստիճանի, եթե մի հնար գտնի հայոց ուխտի միաբանությունը քանդելու և թագավորի հրամանը նրանց կատարել տալու:
ԵՂԻՇԵ

Ասաց պարսիկն՝ ահա՛ քեզ, Վասակ,
Ստացի՛ր մեզնից լի ոսկով քսակ,
Եթե ուրանաս քո ազգությունը,
Կստանաս այլն՝ փառք, պատիվ, պսակ:

Վասակը նորան տվեց պատասխան՝
Հոժար եմ կամքիդ, վեհափառ իշխան,
Ես ուրանում եմ իմ ազգությունը,
Այդ մեծ շնորհաց թո՛ղ լինի փոխան:

Ասաց պարսիկն՝ արի դու, պարոն,
Քո հայրենական ուրացիր կրոն,
Այլև աշխատիր, քո համազգիքը
Մեր օրենքների կատարեն պաշտոն:

Այո՛, կաշխատեմ, իմ տեր, անդադար
Եվ այդ հրամանն ածել ի կատար,
Թե ձեր վեհությունն ինձ Հայաստանի

Թագն ու գահը փոխարեն կըտար:

Կստանաս բոլորը, վկա է երկինք,
Միայն աշխատիր, որ քո ազգայինք
Մեր լեզվով խոսեն, մեր գրով գրեն,
Թողնեն հայրավանդ դպրություն, օրենք:

Այդ ինձ կատարել է խիստ դյուրին,
Թեև չափազանց գործ է դժվարին,
Բայց ես կըշնչեմ, միամիտ կացեք,
Ողջ սրբությունքը համառ հայերին:

Մենք ճանաչել ենք քեզ այր գործունյա,
Մեր նպատակին մտերիմ պաշտոնյա,
Եվ քո փառք, պատիվ՝ կավելանան կրկին,
Վերջին իմ հրաման կատարե, գոնյա՛:

Ցանիր ազգիդ մեջ խռովության սերմեր,
Բաժա բաժանությունք՝ ընդ ամեն կողմեր,
Մատնի՛ր դու մեզ քո երկիրը հայրենի,
Տարածիր այնտեղ իշխանությունը մեր:

Եվ այդ հրամանին հաճեցավ Վասակ,
Առեց նա յուր վարձ՝ լի ոսկով քսակ,
Վազեց դիվաբար դեպ սուրբ Հայաստան՝
Յուր հետ մոգերի ամբողջ հրոսակ:

Հեռ, խռովություն սերմեց ընդհանուր,
Ձգեց բաժանմունք, հարուց հուր և սուր,
Եվ եդեմատիպ՝ խաղաղ Հայաստան
Ավերեց, շինեց անապատ տխուր…